**2015թ. Աջափնյակ վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման աշխատանքներ. փողոցներ և բակեր՝ 96738 քմ:**

**Մայթերի, պուրակների սալիկապատում.**
Իրականացվել են 1100 քմ ընդհանուր մակերեսով սալիկապատման աշխատանքներ:

**Նոր ոռոգման ցանցի անցկացում, եղած ցանցի վերանորոգում.**

- վերանորոգվել է 3200 գծմ երկարությամբ ոռոգման ցանց,
- փոխարինվել են փականներ,
- ներկվել են խողովակներ,
- ստեղծվել են 2.8 հա ընդհանուր մակերեսով նոր կանաչ տարածքներ:

**2015թ. ծաղկային տարածքը կազմել է 1.1 հա.**

- տնկվել է շուրջ 116000 ծաղկասածիլ,
- զարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել են 1650 ծառ և 3650 թուփ,
- աշնանը տնկվել է 60000 կակաչի սոխուկ,
- իրականացվել է շուրջ 1250 ծառի սանիտարական էտ:

## Բնակֆոնդի պահպանում

**Շքամուտքերի վերանորոգում.**

Վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով 150 շքամուտք, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում:

**Վերելակների նորոգում.**

Վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով 22 վերելակ:

**Տանիքների վերանորոգում.**

- թվով 47 բազմաբնակարան շենքերում վերանորոգվել են 5000 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիքներ,
- հիմնանորոգվել է Լուկաշինի հ.43/2 շենքի 1445 քմ մակերեսով թեք տանիքը,
- իրականացվել են բազմաբնակարան շենքերի 6000 քմ ընդհանուր մակերեսով թեք տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

**Վթարային պատշգամբների ամրացում, նորոգում.**

Բազմաբնակարան շենքերում վերանորոգվել է վթարային վիճակում գտնվող 32 պատշգամբ:

**Համագործակցություն համատիրությունների հետ.**

- բազմաբնակարան շենքերում նորոգման աշխատանքների կազմակերպման համար համատիրություններին տրամադրվել է 10 մլն դրամի աջակցություն,
- բնակիչների դիմումների համաձայն՝ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար ձեռք է բերվել 6000 քմ՝ 3000 հատ ասբոհերցաքար:

**Նոր բնակֆոնդի ստեղծում, շենքերի կառուցում, վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցում.**

- վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման նպատակով կառուցվել է **Մարգարյան 45, Սիսակյան 16, Շինարարների 6 և Շինարարների 15** հասցեներում թվով 4 բազմաբնակարան բնակելի շենք:
- վարչական շրջանի 4-րդ կարգի վթարային շենքերի 83 ընտանիք տեղափոխվել է նորակառույց շենքեր (Սիսակյան 3 շենքից՝ 80, Հալաբյան 3 շենքից՝ 3 ընտանիք):

# Բակային տարածքների բարեկարգում

- շահագործման է հանձնվել 10 բակային տարածք,
- հիմնանորոգվել են **Հալաբյան 38, Ֆուչիկի 9, Աբելյան 5, Նազարբեկյան 26, Նազարբեկյան 31, Մարգարյան 1-ին նրբ. 8, Մարգարյան 2-րդ նրբ. 7, Հասրաթյան 14, Լենինգրադյան 48/3, Հալաբյան 41** շենքերի 8655 քմ ընդհանուր մակերեսով բակային տարածքները, որից 4813 քմ-ը՝ կանաչապատ,
- ստեղծվել է 16 խաղահրապարակ,
- տեղադրվել են 18 համալիր, 12 մանկական խաղեր և 65 մարզասարք:

**Մինի ֆուտբոլի դաշտերի տեղադրում**

Շահագործման է հանձնվել թվով 1 մինի ֆուտբոլի դաշտ՝ Մարգարյան 1-ին նրբ. 8 շենքի հարևանությամբ:

**Բակային տարածքների նկարազարդում**

• Իրականացվել են բակային տարածքների նկարազարդումներ 23 հասցեներում:

## Համագործակցություն Հայաստանի էլեկտրական ցանցեր, «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ների հետ

**Ջրամատակարարման համակարգի վերանորոգում**

**Վերակառուցվել է.**

- Ֆուչիկի փողոցի 530 գծմ երկարությամբ ջրագիծը,
- Մարգարյան 2-րդ նրբանցքի 210 գծմ երկարությամբ ջրագիծը,
- Առաքելյան փողոցի 865 գծմ երկարությամբ ջրագիծը,
- Չուխաջյան փողոցի 310 գծմ երկարությամբ ջրագիծը,
- Մելիքյան փողոցի 310 գծմ երկարությամբ ջրագիծը,
- Մազմանյան 6-ից 22 շենքերի 430 գծմ երկարությամբ ջրագիծը,
- բնակարանների 670 գծմ երկարությամբ ջրատար մուտքագծերը,

**Վերանորոգվել են.**

- ջրագծի բազմաթիվ հանգույցներ, փականներ, կարգավորիչներ և խողովակներ:

**Կոյուղատար համակարգի վերանորոգում**

**Կառուցվել է.**

- Աջափնյակի մարզադպրոցի 110 գծմ երկարությամբ կոյուղագիծ:

**Վերանորոգվել են.**

- բազմաթիվ կոյուղահորեր և խողովակներ:

**Գազիֆիկացում.**

- 16 թաղամասի բազմաբնակարան շենքերի գազիֆիկացման արդյունքում գազով ապահովվել է շուրջ 2500 բնակարան,
- վերակառուցվել է Հասրաթյան-Շիրազ փողոցների 1081 գծմ երկարությամբ գազատարը:

## Համագործակցություն Հայաստանի էլեկտրական ցանցեր, «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ների հետ

**Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում.**

**Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության հետ.**

- նորերով է փոխարինվել թեքված և վթարային 19 հենասյուն,
- փոխարինվել և կարգավորվել են 5 բազմաբնակարան շենքերի սնող մալուխագծերը,
- վերանորոգվել են ենթակայաններ:

**Արտաքին լուսավորության ցանցի անցկացում.**

- 13 բարեկարգված բակային տարածքներ ապահովվել են արտաքին լուսավորությամբ,
- 350 գծմ ընդհանուր երկարությամբ արտաքին լուսավորության ցանց է անցկացվել բազմաբնակարան 6 շենքերի բակերում,
- փոքր ֆուտբոլի նորակառույց 1 դաշտ ապահովվել է արտաքին լուսավորությամբ:

## Սոցիալական ոլորտ

**Թեքահարթակների կառուցում.**

- նորոգվող փողոցներում կառուցվել է 23 թեքահարթակ,
- հանրային նշանակության, ինչպես նաև մասնավոր օբյեկտների մուտքերում կառուցվել է 11 թեքահարթակ:

**Այցելություն զորամասեր.**

Կազմակերպվել է Աջափնյակ վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ 275 ժամկետային զինծառայողների 289 ծնողների այցելությունը զորամասեր:

**Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ.**

- սոցիալական ծրագրեր են իրականացվել «Արևամանուկ» ՀԿ-ի, «UOU» մանկական գյուղեր ՀԲՀ-ի, «Լուսինե» կանանց ՀԿ-ի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի, ինչպես նաև բազմաթիվ անհատ բարեգործների և բարերարների հետ,
- «Տնտեսական կայունացում» ծրագրում ընդգրկվել է 32 ընտանիք,
- «Ջրաշխարհ» համալիրում կազմակերպվել է 150 շահառուների հանգիստը,
- սիրիահայ 8 ընտանիքի տրամադրվել է նյութական և ֆինանսական աջակցություն՝ բնակվարձի, կոմունալ վարձավճարների, առողջապահության և կրթության համար:

**Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին և երեխաներին.**

- 326 ընտանիքի ցուցաբերվել է դրամական օգնություն,
- 191 ընտանիքի տրամադրվել է հագուստ, 84 ընտանիք ստացել է վառելափայտ, 94 ընտանիքի տրամադրվել է կոշիկ,
- սգո արարողությունների համար աջակցություն է ստացել 98 ընտանիք,
- աջակցություն է ցուցաբերվել սիրիահայ 68 ընտանիքի,
- բազմազավակ 5 ընտանիքի տոնական և այլ առիթներով տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա,
- 120 շահառու օգտվում է բարեգործական ճաշարանից,
- սոցիալապես անապահով ընտանիքների 1-3 դասարանների շուրջ 196, ինչպես նաև սիրիահայ 4 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ,
- ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով շուրջ 3500 ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ:

## Սոցիալական ոլորտ

**«Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 275 ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:**

## Կրթության ոլորտ

- 4 մանկապարտեզներում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ,
- նոր գույքով համալրելու ծրագրով տրամադրվել է 143 մանկական զգեստապահարան և 143 երկհարկանի մահճակալ,
- պարբերաբար կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև՝ սպորտլանդիաներ, տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ: